

Հայտարարություն
«Սյունիքի մարզպետարանը հրապարակում է սույն հայտարարությունը
փորձագետ ներգրավելու վերաբերյալ

«Սյունիքի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) «Քաղաքացիներին տեղեկացնում է հրավաքանական գործընթացի իրականացման աշխատանքներում փորձագետ ներգրավելու մասին:

Աշխատանքների համառոտ նկարագիրը.

Մարզպետարանի շահերի արդյունավետ և լիարժեք պաշտպանության իրականացում, ՏԻ և մարզային ենթակայության կազմակերպությունների ընդունած իրավական ակտերի վերաբերյալ փորձագիտական վերլուծություն, լիարժեք և ամբողջական պատկերացումների և գնահատականների ձևավորում:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ Պայմանագիրը կնքվում է մինչև 2019 թվականի հունիսի 1-ը:

Փորձագետի պարտականությունները՝ իրականացնում է.

1. դատական ատյաններում մարզպետարանի շահերի ներկայացում,
2. համայնքներում վարչական և իրավական հսկողության ընթացքում խորհրդատվական և փորձագիտական աջակցության ցուցաբերում,
3. տեղական ինքնակառավարման մարմինների և մարզային ենթակայության կազմակերպությունների ընդունած իրավական ակտերի փորձագիտական վերլուծություն,
4. առանձին կոնկրետ հանձնարարականների շրջանակներում իրավաբանական խորհրդատվություն և ծագած խնդիրների լուծումների վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների ներկայացում,
5. մարզպետարանի համակարգի կազմակերպությունների և ընկերությունների կանոնադրության մշակման և կազմման գործառույթներին աջակցության ցուցաբերում:

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

- ունի բարձրագույն իրավաբանական կրթություն.
- առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Վարձատրության չափը՝ Պայմանագրային:

Փորձագետի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը, ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

- գրավոր դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- կրթությունը հավաստող պետական նմուշի և գնումների համակարգողի որակավորման փաստաթղթերի պատճենները,
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարան, անձնակազմի կառավարման բաժին):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9:30-ից մինչև 12:30-ը բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետարան (0285)44275 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 19/02/2019թ.: